ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"_5_" _հոկտեմբերի_ 2012թ № _124-Ա_

ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐԻՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈՒ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի ա/ ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում վարակիչ հիվանդությունների կանխարգելման և դրանց դեմ պայքարի 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ռազմավարական ծրագրի միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1913-ն որոշմամբ և համաձայն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012թվականի սեպտեմբերի 26-ի ՈԴԴ/04/9325-12 գրության պահանջների, **որոշում եմ՝**

1. Հաստատել՝

1) համաճարակներին պատրաստվածության մարզային ծրագիրը՝ համաձայն N1 հավելվածի.

2) վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի և կանխարգելման հարցերով հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացում:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2012թ. հոկտեմբերի 5
ք. Կապան